

ՏԱՍՆԱԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

Օտարազգայնացիք դիմում են ուղղակի
Тифлису. Редакция «Мелк»

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ երեւոյց: Նա-
մակ խմբագրութիւն: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ: «Русский Курьер» լրագրի թղթակե-
ցութիւնը: Ֆրանսիայ: Թիւրքիա: Նամակ Առաւելա-
ցից: Արտաքին լուրեր: ՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ: ՀԵ-
ՌԱՅԻՐՆԵՐ: ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ: Մի առաջարկութիւն Բագրի «Մար-
գարիսկան ընկերութեան» անդամներին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

Յուլիսի 21-ին

«Մշակի» 114 համարի առաջնորդող յօդուածը
մեծ համակրութեամբ ընդունվեց երևանում: Ոչ
մի կերպով չէ կարելի ուրանալ նորա ճշգրե-
թիւնը, զորանում համոզվելու համար հարկաւոր
է մի փոքր հայեացք գցել մեր բարձր ուսում ա-
ռած երիտասարդութեան վրա: Այն լուրը, որ
Թէյրաբազի գիւղից մտադիր են դադրել Ղրիմ
15 տուն, ճիշդ էր: Այդ առաջ էր եկել մի երկու
նոյն գիւղացի խաչագողներին զրկելուց, որոնք մի
քանի տարի քաջ գաղով Ռուսաստանում և սո-
վորելով ուսել յափշտակած փող, սկսել էին
լրբաբար ուրիշներին ևս քարոզել զաղթելու:
Բայց ձեր 114 համարի առաջնորդող յօդուածը
«Խնտիկիցնայի դերը» վերնագրով, կարողացաւ
այդ բանի առաջն առնել: Երևանցի երկու ու-
սանդոտ երիտասարդներ շտապելով հասկացնել
գիւղացիներին իրենց դիտաւորութեան վատ հե-
տեանքները, կարողացան յետ կանգնեցնել նո-
րանց իրանց դիտաւորութիւնից:

Փաղը և ծեծը այստեղ սկսվել է, որի պատ-
ճառով շատ գիւղեր գոյում են փողի պակասու-
թիւն: Վեր առնենք, որիմակ, Թէյրաբազի գիւղը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ԲԱԳՈՒԻ «ՄԱՐԿԱՍԻՐԱ-
ԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ» ԱՆԿԱՄՆԵՐԻՆ

Գնանք առաջ. ենթադրենք թէ պատուելի խոր-
հուրդը իր ծրագրած ուսումնարանի համար 3,500
մանկով գտաւ կարելի ուսուցիչները: Հարց-
նում ենք, այսպիսի ուսումնարանը ինչ բանի
պէտք է ծառայէ, աւարտողները ինչ պաշարով
պիտի դուրս գան և ինչ բանի պատրաստ-
ված: Գիտցե՛ք թէ այդ մեր սանկը ծաղկոցից
պիտի մանկն իսկապէս ուսումնարան այնքան
զարգացած, ինչպէս որ ներկայումս մեր I բա-
ժանման ամենալաւրժ և առաջնորդ աշակերտ-
ներն են: Երկու տարում նոքա ինչ առ-
տիճանի ուսում ամբողջութեամբ կը ստանան,
օրական թէ 5 դասով, բայց իսկապէս մե-
զանում իրարու վրա հաշկելով 2 1/2 ժամ չէ
բռնում: Այս երկու տարին նոցա համար իսկա-
պէս ուսումնարանական կանոնաւոր կրթութեան
պատրաստութիւն կարելի է համարել: Բայց ինչ
բանի համար: Կը պատրաստեն իրարաւ գրե-
լում վարժութիւն ունենալու համար, մենք կը
պատասխանենք—դա քիչ է հոգաբարձութիւն ու-
նեցող հարուստ քաղաքի ուսումնարանի համար,
մանաւանդ որ դրա վրա Մարգարիտական ընկե-
րութիւնը դնում է իր բոլոր կարողութիւնը: Այս,
սա քիչ է կասեն: Մենք, կը պատասխանենք, մեր
սանկերն միտքը կարելորդութեան չափ լայնացնե-
լով, նոցա սիրող աղնացնելով և որ գլխաւորն է
ազգային լեզուի ձաշակելն ու ողջոյն ընտելացնե-
լով կը պատրաստենք նոցա կենսաբի համար: Նո-
ցանից կը լինի կախված՝ կը ցանկային արդեօք
շարունակել իրանց ուսումը, թէ ապրուստի մշակ

Այդտեղի հողագործը պէտք է սպասի քաղի և
ծեծի վերջանալուն, որ ծախի և փող ունենայ,
բայց ինչպէս իր քաղը քաղել տայ, մինչդեռ փող
չունի: Նա ինչ է անում, վեր է առնում տոկոս-
տով փող, և այն ոչ թէ վաճառականական—
20%—ով, այլ մինչև կալի վերջանալը, որ մի ա-
միս հազար լինի մի ռուբլուն վճարելով մի լիւր
(12 ֆունտ) ցորեն: Եթէ հաշկենք այժմեան դե-
նով լիւր 24 կոպէկով, ուրեմն տարին մի ռուբլուն
անում է 2 ր. 88 կոպ. տոկոս, այն է 288%: Ահա
անգուր լաշխատուի խիղճը. իմ կարծիքով այս
կը նշանակի բաց օրով աւազակութիւն: Բայց
միթէ սորա առաջը չէ կարելի առնել: Շատ հեշտ:
Միայն սա ևս մնում է երիտասարդութեանը, ինչ-
պէս ճիշդ նկատում է «Մշակի» 114 համարի ա-
ռաջնորդող յօդուածը: Երիտասարդութիւնը պար-
տական է քարոզելու, և ժողովրդին հասկացնելու
փոխադրած օգնութեան ընկերութիւնների և փո-
խատու գիւղական բանկերի կարելորդութիւնը գիւ-
ղերում: Այդ մտքերը «Մշակը» քարոզել է դեռ
1873 թվից, այսինքն իր գոյութեան երկրորդ տա-
րուց սկսած: Այդ ժամանակ աղքատ հողագործը
վեր առնելով գիւղական փոխադրած օգնութեան
ընկերութիւնից փող ինչքան ժամանակ իրեն
հարկաւոր է, կը բանեցնէ և յետոյ քիչ տոկոսով
կը վերադարձնի ընկերութեանը, և ոչ թէ Թէյ-
րաբազի հողագործի պէս 288%—ով փող վեր
կառնի: Ուրեմն ժամանակ է մեր երիտասարդու-
թեանը աշխատելու: Մի կողմ դրած հին նահա-
պետական կերպով տնտեսութիւնով պարագելը,
որի ուղղելը նոյնպէս երիտասարդութեան պար-
տականութիւն է, թող նա դռնակ կարեկից լինի
ժողովրդին միայն հիմնելով նրա մէջ փոխա-
դարձ ընկերութիւններ, որի կարելորդութիւնը օրից
օր աւելի զգալի է լինում և որից աղքատ հողա-
գործը, տարկայ այն ժամանակում, ինչպէս է դա-
րուել, երբ նա փողի մեծ կարծաւորութիւն է դրում,
կարող է օգտուել և ազատվել անգուր լաշխա-
տուից:

դառնալ: Թէ այս և թէ այն ճանապարհի մէջ մեր
ազգային ուսումնարանի խորհրդաւոր գրեթէ
անջնջ կը մնալ նոցա «որտի ու հողու վրա»: Այս,
շատ զովելի միտք ու ցանկութիւն, բայց մենք
կասէ՛նք, որ այս տեսակ կրթութեան համար մեր
երկու տարին քիչ է: Գուցէ բաւական էր մեր
նահապետական կենտրոններում, բայց Բագրի
համար, որտեղ ուսումնարանի շինածը ամեն վայր-
կեան զանաւոր է փողոցը՝ այդ ժամանակամի-
ջոցը շատ ու շատ քիչ է: Բայց գուցէ պատաս-
խանեն: Մենք մեր ուսումնարանի ուսման բովան-
դակութիւնը այնպէս կը յարմարեցնենք, որ մեր
աշակերտները քիչ ու միջ հայեքն իմանան և
կարողանան բնական գիտելիքի մասին:

Գէ՛հ, այս հանձնարել մտածութեան դէմ ևս ո-
չինչ չունեմ ասելու: Եթէ մեր խելը այնքան
կտրում է, որ մենք մեր մատող սերունդը ա-
ռանց ազգային գոնէ սկզբնական կրթութեամբ
հիմնաւորապէս դատարարակերտ մեր ուսումնա-
րանների մէջ և ազգային ինքնաձայնաւորութեան
ոգի ներշնչելու՝ ձգտում ենք նետել պետական
զարգացման գիւղը քաղաքը ու դայրացած համ-
բակների թիւն աւելացնելով, ինչպէս մեր նորա-
սէր բնաւորները անում են իրանց դաւանները
գիմնադրան տալու համար... այն ժամանակ մենք
ստիպւում ենք այդ ապրիտութեան դատող
Աստուծոյ յանձնել՝ արիւն ձեր ի գլուխ ձեր ասե-
լով: Մեզ մնում է Յոբնայի նման փախ-
չել այդ Հոռովից, «որտեղ քաղաքացու միտքը և
զգացմունքը այն աստիճանի եղծված է, որ կեղ-
ծաւոր ու ապրիտ յոյնը՝ իր հայրենիքում բաղ-
նիստան կամ ձեռնածու (ալիքօրատ) այստեղ իմաս-
տասել-դատարարակ է ընդունվում»: Իդուր է այ-
նուհետեւ մեր ընկերութեան համար ժողովրդակա-
նութիւն, յարգանք ու վարի որոնել, եթէ մեր
զեկավարների մէջ ոչ միայն կարծիք կը յայտն-
վի, այլ ինչպէս կարելորդութիւն կը պնդի Մար-

Ամսոյ 5, 6 և 7-ին այստեղ իրար ևս կա-
տարված երեք սպանութիւններից յետոյ երևանի
հայերը սարսափի մէջ են ընկան: Բայց զարմանա-
լի է թէ ինչու երևանի հայ հասարակութիւնը
այստեղ վախկնում է: Կարծիք չը կայ, որ բաց և
հրապարակ տեղերում սպանութիւններ չեն կա-
նող պատահել, իսկ ինչ վերաբերում է ծածուկ
տեղերին և գիշեր ժամանակ կատարված սպա-
նութիւններին, ինչու վախկնալ. իսկ երևանցի
կարող է իրան պաշտպանել: Ամեն մի մարդ ի-
րաւունք ունի տանը ունենալ զէնք, թող երևան-
ցիքն ևս ունենան այդ և պաշտպանեն իրանց
կենսաբան ազգակիցները: Այսպիսի սպանութիւն-
ներ կարելի է վերագրել նախ՝ դատարանի ու նա-
հանգանակ վարչութեան ամբաստանող—Կարաչիչազ
հի թղթակից «Մշակի» 118 համարում: Այս բա-
նի համար կարծեմ տեղիս վաճառականները մը-
տադիր են ինչպիսի տալու Կովկասի կառավար-
չապետ իշխան Գոնդուկով-Կորսակովին: Մի կողմ
դրած այն հազարն գումարը (300,000 ռ.), որ
միտվել է Կարաչիչազում տնի շինելու համար,
այլ և այլ վարչութիւնների բացակայութիւնը,
կառավարութիւնը, զոնէ այս սպանութիւնները
աչքի առաջ ունենալով կարող է ուշադրութիւն
դարձնել այդ խնդրի վրա: Եւ երկրորդ, պոլիցիա-
յի կազմակերպութեանը. եթէ երևանի քաղաքա-
յին վարչութիւնը մի փոքր ուշ դարձնէր տեղիս
պոլիցիայի կազմակերպութեան և վերանորոգու-
թեան վրա, կրկին այդքան սպանութիւններ չէին
պատահի, մանաւանդ փողոցներում, ինչքան էլ
ամբարանոց գնալու լինէին: Օրինակի համար վեր
առնենք Թիֆլիսը: Չը նայելով, որ այդտեղ բը-
նակիչները քանի անգամ չափ են երևանի բնա-
կիչներից, ինչքան բազմաթիւսակ ազգեր կան, և
ինչքան մեծ է քաղաքը, կրկին այսպիսի սպա-
նութիւններ չեն պատահում: Այդ ինչից է, եթէ
ոչ պոլիցիայի կազմակերպութիւնից: Զեյզ օժտ
ամեն մի փողոցում յայտնի հեռաւորութեան վրա

զատիւրական ընկերութեան 4,000 ռ.—ով տարեկան
8—10 աշակերտ պատրաստել գիմնադիպի համար,
այն գիմնադիպի, որ մեր ժողովրդական կենսաբի
հետ եթէ մի կապ ունի՝ դա արշիւնի և դահլիսի
չափն է: Ինչի մեր աղքատ հասարակութեան այդ
միտքը պատուաստենք, մինչդեռ նա անկարող է
գիմնադիպի պահանջները կատարել, գիմնադիպի,
որից մարդ-քաղաքացի դուրս գալու համար 12
տարի անընդհատ տոկոսն աշխատութիւն կուզէ
և դրամական կարողութիւն...

Այս բոլոր պարագաները աչքի առաջ ունենա-
լով, մենք կասենք որ մինչդեռ Մարգարիտական
ընկերութեան վիճակը ներկայ աննախանձելի
դրութիւնն ունի համեմատաբար նորա կուլման ու
հոգակից, խորհրդական ժողովի ճիշդ ու ձգը
տուրը մշտաշարժ մեքենան (perpetuum mobile)
նշարներ աշխատանքի բնաւորութիւն ունի, Բա-
գրի ազգային ուսումնարանը քիչ թէ շատ ար-
դիւնաւոր վիճակի մէջ գնելու նկատմամբ: Ինչ
տեսակ ևս չը յեղափոխվի—այդ ուսումնարանը
Տրիշկինի վերաբերելի նման է կարկառուի:

Մենք ուսումնարան պահելու կարողութիւն
չունենք: Կարող ենք ունենալ միայն ծխական
ծաղկոցներ, Բայց քանի որ այդ ուսումնարանը
ունենալու ցանկութիւնը մեր մէջ կամակորու-
թեան է հասած՝ և կը ցանկայինք տակաւին մեր
նպատակի մէջ յամառել, դորտի նման պիտի ծա-
թէինք, որ կովի նման մեծ լինելու համար գըծ-
վում էր: Այս, մեր ունեցածը պաշտօնապէս, ձեռով
ուսումնարանի անուն կանխնայ, բայց իրօք ա-
մենայն բան կը լինի՝ բացի ուսումնարան լինելը:

III

Իմ ամենախորին ու անդրդուելի համոզումն է,
որ Մարգարիտական ընկերութիւնը իր 4,000 տա-
րեկան ծախքը իսկապէս արդիւնաւոր կարող է
անել՝ եթէ նա իր գործունէութեան ընթացքը փո-
խէ հետեւալ հիմանց վրա.

կանգնած են պոլիցիականներ, և մի կողմ պա-
տահելիս իսկոյն կուռոյներին տանում են պոլիցիա-
յիս այստեղ այդ չը կայ, եթէ պատահում է մի
փողոցում կողմ, մինչև պոլիցիան լուր բերելը և
պոլիցիականների հասնելը բանը բանից անց է
կենում և սպանողը իր գործը կատարած՝ անհե-
տանում է: Միթէ եթէ երևանում էլ լինէր այդ
կարգը, կը պատահէին այդքան սպանութիւններ:
Յանկարի կը լինէր որ տեղիս քաղաքային վար-
չութիւնը ուշ դարձնէր այդ բանի վրա և այդքան
սպանութիւնների առաջն առնէր: Բայց ինչքան
լաւ կը լինէր Կարաչիչազ չը գնալը և տեղիս
պոլիցիայի վերանորոգութիւնը, այդ ինքն ըստ
ինքեան հասկանալի է:

Վերը յիշված երեք սպանութիւններ էլ հայեր էին:
1) Ամսոյ 5-ին սպանվեց քէֆի մէջ, այդ սպա-
նումը վերագրում են սպանողի և սպանվածի մէջ
առաջվանից եղած թշնամութեան. դրա համար
այժմ բանտարկված են 8 հողից: 2) Մի հայ պա-
տահելով ջրի համար կուռը երկու թուրքերի,
ուղեցել է բաժանել. նրան սպանել են: Սպանողը
բանտարկված է: 3) Սորան դռան քաղաքից դուրս
և գուրդը կտրած, չարագործները դեռ չեն գտն-
ված:

Այս սպանութիւններից յետոյ պոլիցիան սկսեց
դիմաթափ անել հրապարակաւ զէնք մանածոյնե-
րին:

2.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 22 յուլիսի

«Մշակի» № 127 մէջ մի կարեւոր լուր էր տպա-
գրած Հաւաքարից բժշկի բացակայութեան մասին:
Այս առաջին անգամը չէ՝ որ տեղական մա-
մուլի մէջ զանգատներ են լսվում այս առիթով,
բայց այնու ամենայնիւ այս հարցը մի և նոյն
դրութեան մէջ է մնում, ուստի աւելորդ չի լինի
մի քանի նկատողութիւններ աւելացնել այդ լու-

ա) Որովհետեւ Մարգար. ընկերութիւնը կուլված
է իր գործունէութեամբ համազգային կերպարան
ստանալու,—բուն իսկ հայութեան հիմն հաստա-
տելու ազգային լուսաւորութեան միջնորդու-
թեամբ, այդ պատճառով նախ և առաջ որոշելու
է ընկերութեան գործունէութեան բնական կեն-
սավայրը: Այս կենսավայրը մեր գիւղերն են, որ-
տեղ ազգային լուսաւորութեան վրա հոգալու հո-
գաբարձութիւն չը կայ իրօք և չէ կարող լինել:

բ) Մարգարիտական ընկերութիւնը ոչ միայն
չը պիտի ստուգելայնէ կամ անհետացնէ ծխական
հողաբարձութեան կազմակերպութիւնը նոցա
պարտքը և իրաւունքը իր վրա ստանձնելով, ընդ-
հակառակն նա պիտի աշխատէ այդ մարմինները
գորացնելու, հաստատուելու և բոլորովին կազմա-
կերպելու՝ օժտելով նոցա իր բարոյական և դրա-
մական կարողութիւնից:

գ) Բագր. համեմատաբար մեծ ազգային ու-
սումնարանի ստիպողական կարիքն ունի՝ գոնէ
քաղաքային ուսումնարանի պրօգրամայով: Բա-
գր. իր յոյսը դնելով Մարգարիտական ընկերու-
թեան վրա միշտ անտարբեր պիտի մնայ այդ պա-
հանջը ըստ կարելորդութեան լրացնելու անձնակա-
նի համար շտապելու կարողութիւն պիտի ու-
նենան, բայց որդոց դատարարակութեան հար-
ցի ժամանակ մշտական աղքատութիւն ու մու-
րացկանութիւն... Մարգարիտական ընկերութիւնը
ներկայ դրամական միջոցներով միշտ անկարող
պիտի լինի այդ անտեղի անհնկալութիւնը իրա-
գործելու:

դ) Վերոյիշեալ յօդուածի մտքով, քանի որ մեր
ծխական ուսումնարանի խնամածութիւնը և ամ-
բողջ կառավարութիւնը Մարգարիտական ընկե-
րութեան ձեռքն է, որ ամեն տեղից օգնութիւն ու
նպաստ ընդունող կենթադրի և մեծ կարողու-
թեան տէր կը հաշակվի, նրանից ստիպողաբար

րին: Նախ պէտք է ասել, որ Արաս-Արատեան հրապարակից սկսած, ուր բնակւում է բժ. Կ. Մէլք-Բէշլարեանց, դէպի Միլիդոյեանի գործարարներ, միւս կողմից՝ Ալմարոյի դեղատանից սկսած մինչև Թուրքաց հրապարակը և յետոյ այստեղից սկսած մինչև Խօջի-Վանք կամ լաւ է ասել—Նաւթ-լուղ՝ միւս կողմից Սաղից մինչև Վօրօնցօյի արձանը,—այս անաղին տարածութեան վրա մի մշտական բժիշկ չը կայ: Բայց քաղաքի հէնց այս թաղերում, ինչպէս յայտնի է, բնակւում են գրեթէ միայն հասարակ արհեստագործներ, մանրածախներ կամ մշակներ, այսինքն թէ աղքատ և թէ առողջապահութեան պայմաններին անձանթ, ուրեմն և հիւանդութեան յաճախ ենթարկւող դասակարգերի մարդիկ:

Ինչ գոյնով որ նկարագրէք հիւանդութիւնը այս թաղերում, չափազանցութիւն չի լինի: Գրեթէ զոհարար Հաւարարի լայնածիփ տարածութեան պատճառով բժշկները յօժարութեամբ չեն զալիս մեղ մօտ, այնպէս որ ևս գիտեմ մի քանի անձինքներ, որոնք, բժիշկ չը գտնելու պատճառով, ստիպւած էին պառկել հիւանդանոցում: Այս 10 օր կը լինի, որ իմ մի ծանօթ նմանապէս գնաց հիւանդանոց, որովհետև բժշկները չեն ուզում գալ: Այս ուշադրութեան արժանի է: Մի տեսակէտից շատ բնական է, միթէ ժամանակ կորցնել չէ 3—4 փրատ անելը թող կու տալով, մինչև որ հասնի Հաւարար:

Հիմա կը հարցնեն. ուրեմն այս թաղերում ամենին բժշկող չը կայ: Ինչպէս չէ, բնական օրէնք է, որ ոչ մի տարածութիւն դատարկ չէ մնում—բժշկներ չը կան, բայց կան ֆելդշերներ (արհեստան), կարտաշներ, ժողովրդական «հէքիներ», սափրիչներ, փաշլիներ (գուշակող), երազահաններ և մարդկութիւնը մոլորեցնող ու նրա առողջութիւնը աւելորդ սրանց նմաններ: Արանք են մեր ակնբարոյները, մեր հոգեբանները, մեր վերաբոյժները:

Արանց հոգաբարձութեան տակ են գտնւում մօտ 40,000 մարդիկ:

Յայտնի է սրանց բժշկութեան արդիւնքը, բայց եթէ յայտնի լինի ինչով են բժշկում, այսինքն ինչով են ցանկանում բժշկել,—հասկանալի կը լինի առաջին դրութիւնը:

Նորերում միջի փողոցում պատահած անցքը (մարդ թունաւորելը) մի քանի ալ պատճառների հետ միասին հարկադրեց թաղական բժ. պ. Վեր-միշկին որոնել այս մարդասպանների տները— և ինչի չը կային սրանց մօտ: Մէկի մօտ գրան-վեցաւ մի կատարեալ դեղատուն իր ժապակեանքը գրեթէ (ինչի համար են սոքա), ամենայն գոր-

պիտի պահանջի Բագուի ծխական ուսումնա-րանների բոլոր կարիքները ամբողջութեամբ լրացնելու: Ընկերութեան մատակարարութիւնը նրա կրած տիրույթին պիտի համապատասխանէ: «Որում շատ տուաւ շատ խնդրեցի ինձանէ»: Կարիքը տրամաբանութիւն չունի և բացասական համոզման լեզուն չը հասկանար, մանաւանդ երբ նա հաւատում է, որ իր փրկութեան համար մօտին «Մարդասիրութեան» անունով մի ընկերութիւն կայ: Բայց եթէ դուրս գուր խփող կարիքը համոզվի, որ ընկերութեան անունը կայ, ինքը ոչ,—«որտեղից այնուհետև մեր ուժերը կը ստանանք, երբ հասարակութեան հաւատը մենք մեր ընթացքով պիտի մեղցնենք:

Ահա թէ որտեղ է մեր ընկերութեան բարոյապէս անանկալաւ աղբիւրը: Որքան մարդ Բագու է դիմում այդ ընկերութեան անունը իրան համար առաջնորդ ունենալով, Բագու եւ ասում, բարոյապէս, մտաւորապէս և ֆիզիքապէս ընկնող այս անխելած քաղաքը, որ գիւղական հայ ազգաբնակչութեան համար եղիպտական ժանտախտից վատթար ու սոսկալի է:

Այս հիման վրա ոտն դնելով՝ մենք բարոյ կը համարենք, որ այժմէն և եթ ընկերութիւնը ծխական հոգաբարձութեանը պատկանելին հոգաբարձութեան վերադարձնէր մի մասնաւոր բայց արգելադրել նպատակ տալով նրան, և ինքը տեղափոխէր իր գործունէութիւնը գիւղերը: Այստեղ նրա արդիւնքը նպատակարարաւ ամբողջութիւն կունենար, որովհետև կարիքը առժամանակ մեծ չէ, ինչպէս և խոչնդոտները: Սա է իմ կարծիքով ընկերութեան անունի բարձրանալու ճանապարհը՝ հետևաբար նրա նիւթական կարողութեանը արդարապէս և արդիւնաւորապէս մասն բաժին անելու ուղին:

Ո՛վ կերակայէ, որ մեր գիւղերը, մեր ազգութեան տարրերը 300—400 բուրլու կարծուութիւն

ծիւղներով և բացի սրանից առաջին բանակութեամբ և ամենաստատիկ թոյներ, այնպէս որ բժիշկը ասում էր թէ նա ինքը իր բժշկութեան բոլոր ընթացքում «ստրկինին» բառը չէ գրել... Իսկ սրա մօտ ամեն բան կար: Վերջապէս երկու մեծ արկղներ լցրին դեղերով և ներկայացրին նախնական բժշկին, իսկ նրանց տէրը դատի է կանչված:

Բայց չարիքը արմատից պէտք է հանել: Բժշկվող կայ, բժշկող չը կայ—ինչպէս անել:

Միակ միջոցը, որ կարող է ժողովուրդը ազատել խաբեբայ տգէտներից,—այդ միջոցը բժշկանոց բանալն է Հաւարարում, ինչպէս որ կայ Կուրիա թաղում: Ես հաստատ արդիւնքից գիտեմ, որ եթէ Հաւարարում բժշկանոց լինի, նրան այցելող հիւանդներին 25% զիջում կանէ այնտեղի դեղատունը (ինչպէս և Կուրիա է, եթէ չեմ ըստալովում):

Իսկ եթէ քաղաքային բժիշկը ընդդիմանայ այս բարի գործին անձնական շահերը պաշտպանելու համար, վերին աստիճանի արդարութիւն կը լինէր բնակեցնել նրան իր թաղում և ոչ չորս մղոն հեռու, Կուրիայի վերջում:

Հաւարարի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Русский Курьер» լրագիրը հաղորդում է, որ Կուրիական աղետը ամբողջ Ռուսաստանի վրա այնպիսի զօրեղ ազդեցութիւն գործեց, որ շատերը, գոնէ սկզբներում, կատարեալապէս հրաժարվում են երկաթուղիներով ճանապարհորդել: Հասարակութեան երկիւղի չափը նրանից է երևում, որ փոստային ճանապարհներում, Մոսկով-Կուրիական երկաթուղու գնացքի կործանողից յետոյ, ձիերի պահանջը սաստիկ մեծացաւ և այնտեղ, ուր տարիներով չէր համարեա չէր կարելի հանդիպել կառքերով և սայլերով անցնող ճանապարհորդներին, այժմ նրանք խիստ շատացել են:

ՄԱՆԳԼԻՍԻՑ մեղ գրում են որ թէ և Մանգլիսի հայոց հասարակութիւնը վերջին ժամանակները վերանորոգեց ու զարդարեց իր մինչև այժմ անխնամ թողնւած եկեղեցին, բայց մի բան մոռացաւ, այն է ոչ մի տիրացու չը հրաւիրեց, որ կարողանայ օգնել քահանային ժամասացութիւն անելու ժամանակ:

Յուլիսի 11-ին, ինչպէս մեղ գրում են ՂՈՒՐԵՐՑԻՑ, այդ քաղաքում հայ սիրողները մի ներկայացում տուցին: Խաղաղին «Վարդանանց պա-

ունեն, կուրիականից ազատվելու կամ մարդուր աղաղակներին գերի չը գնալու համար, մինչդեռ Բագուի Մարդասիրական ընկերութիւնը մօտ 6000 ր. է միասում մի անկեղծանոց ու ծուլանոց խնամելու համար, անկեղծանոց՝ որտեղ մատաղ սերնդի բարքը ու վարքը առաւել է եղծվում, քան թէ կրթվում: Սրանից առաւել ինչ անէ՞ք մեր գլխին, առաւել ինչ մեծ հեղուկութիւն մեր ընկերութեան սկզբունքների և նպատակի վրա... Sapiienti sat! Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ:

Ընկերութիւնը 6000 բուրլ է տրամադրում Բագուի ծխական ուսումնարանը կառուարելու: Այս գումարի 2000-ը ծխական է: Ընկերութիւնը թող այդ 2000-ի հետ վերադարձնէ ծխական հոգաբարձութեան նրա պարտքը և իրաւունքը, թող այդ հոգաբարձութիւնը մեղներեցի կենդանութիւն ստանայ: Մնացած 4000 ր. երկու հաւասար բաժին անէ. մինը Բագուին նուիրելով, որ արդարութիւնը կը պահանջէ, միւրը գիւղերին ընծայելով՝ որ սկզբունքը և նպատակը կենթադրէ: 2000-ից 1200-ը կը նշանակվի մի օրիորդական ծաղկող խնամելու երկու բաժանմամբ և մի արուեստանոց, որի ծախսը ինքը կը հանէ: 800 ր. կը նշանակվի հասարակաց ընկերացարանը հարստացնելու, դաստիասութիւնները և կիրակեայ ուսումնարանները կազմակերպելու համար: Մնացած կարևորութեան վրա թող ծխական հոգաբարձութիւնը հոգալ:

Ինչ որ կը վերաբերի միւս բաժնին, 2000 բուրլով ընկերութիւնը առնուազն 5 գիւղական ուսումնարաններին կարող է նպաստել և մի բաժին ևս հանել մամուլի ամենագորաւոր օգնութիւնը ձեռք բերելու համար:

Իցէ թէ ինձ պատճառաբանեն, որ Բագուի ծխական հոգաբարձութիւնը անկարող է մեր ուսումնարանական պահանջը լրացնելու. նա բարոյապէս պիտի սնանկանայ: Շատ բարի, ընդունում

տրեղամ՝ ողբերգութիւնը: Ներկայացումն շատ աջող էր և հանդիսականների թւում կային բաւական շատ հոգեւոր և թուրքեր: Ներկայացումից մնաց 87 բուրլ դուռ արդիւնք: Բայց ինչպէս ասում է թղթակիցը, ներկայացումների մէջ մինչև այժմ վեճ է շարունակվում թէ ինչ նպատակին նուիրեն ներկայացումից գոյացած փողը:

Նոյն տեղից մեղ գրում են որ մինչև Բայաբէկ Հասանբէկովի դաւաճապետ նշանակվելը Ղուրայի կողմերում գողութիւններն ու աւաղակութիւնները անպակաս էին, իսկ այդ դաւաճապետի նշանակվելու օրից, բաւական խաղաղութիւն է տրուում դաւաճում:

Գարձեալ մի քանի նամակներ ենք ստացել Ա. Լ. ՔԱՍՆԻՐԱՊՈՒՅՑ, որոնց մէջ գանգատվում են այդտեղի հայ քահանաների մեծ մասի տգիտութեան մասին և նկարագրում են նրանց անբարոյական բարքը ու վարքը:

Այս օրերս կը տպագրենք «Մշակի» բանասիրականի բաժնում Զախէր-Մարգարի գեթականական հեղինակի մի փորձիկ և գեղեցիկ պատկեր «Մեր քահանայ» վերնագրով:

«Մշակի» վաղվան համարում կը տպագրենք պ. Ա. Արասխանեանցի մեղ ուղարկված թղթակցութիւնը Մոսկովայից ընդհանուր ուսաց աղուեստահանդիսի կովկասեան բաժնի մի նշանաւոր ձիւղի մասին, այն է չորամագործական արդիւնքների մասին:

«Русский Курьер» լրագիրում կարգում ենք հետևեալը: Մեղ հաղորդում են, որ մեր համալսարաններում ուսանողներին քննելու համար կազմվելով յանձնաժողովները իրանց նիստերը կուսենան ժողովրդական լուսաւորութեան միջոցով որոշած ժամանակամիջոցներում: Քննութիւնները լինելու են կամ 1) լրացեալ, կամ 2) երկու տէր-միսի վրա բաժանված, առաջինը կը լինի կիսադասընթացի քննութիւն, երկրորդը—վերջնական քննութիւն: Քննութիւնների այդպիսի բաժանումը երկու տէրմիսի վրա պարտաւորեցուցի է բժշկական յանձնաժողովներում քննութիւն տուողների համար: Միևնախոր կամիցն է կախված նոյնպիսի բաժանումն պարտաւորեցուցի դարձնել մնացած ֆակուլտետների ալ յանձնաժողովներում քննութիւն տուողների համար: Քննութիւն տալ ցանկացողը պարտաւոր է խնդրել տալ սկզբից յայտարարված ժամանակում մինչև յանձնաժողո-

ւում: Բայց բանն այն է, որ ընկերութիւնը միանալով հոգաբարձութեան հետ, դարձեալ անկատար է մնում և պիտի մնայ մեր պահանջը և ընկերութիւնն ևս արդարապէս պիտի սնանկանայ: Ինչի մէջ սնանկութեան տեղ երկու սնանկութիւն ունենանք. ինչի Մարդ. ընկերութեան գլխին բերեց հոգաբարձութեան սնանկութեան փորձանքը, երբ որ ընկերութիւնը իր կենսավայրի մէջ իր կարողութեան համեմատ արդիւնաւորապէս գործելու և վաստակելու կարողութիւնը ունի: Մեր հոգաբարձութեան սնանկութիւնը մասնաւոր նշանակութիւն ունի և կը վերաբերի Բագուին: Ընկերութեան սնանկութիւնը համազգային նշանակութիւն ունի, որա թշուառութիւնը ազգի թըշվառութիւնն է. դրա ամօթը բոլոր ազգին կը վերաբերի:

Մամուլի համար ևս մի քանի խօսք: Առաւել մեծ օժանդակութիւն արած էինք լինի համադրային կրթութեան, եթէ նա միջանակ ու օգնութիւն սահմանելով՝ ընտրի դասաղբերի և բեղմնաւոր ընկերացանկեաց հեղինակներին՝ արժանացնէր մեր գրքերի առասպելական թանգութիւնը, կամ տարածէր Աւետարանի աշխարհաբար ազգային տպագրութեամբ:

Աւագ մեր բաղդին: Եթէ մեր հանգուցեալ հեռատես նախնիք այսօր վերկենային և տեսնէին մեր վիճակը, ամենախորին ցաւօ պիտի հաւաքէին: «Ո՛վ այսուհետև զմեր յարկեացէ գուսունն»: Ո՛ւր է մեր տպարանը, որ այնչափ մեծ աշխատութեամբ Բագուի աւաղների վրա հաստատեցինք, իմանալով՝ որ սա ժողովրդական կրթութեան և լուսաւորութեան ամենագորաւոր ջանքն է, որ եթէ Արեւմտեղուր գտնէր՝ աշխարհք կը բարձրացնէր: Եւ եթէ այս ուրուականները պատէին Բագուի մէջ և տեսնէին նոր տպարանները, որ անասելի վաստակով գիւղի և ցերեկ գործում են, նրանք պիտի բացազանչէին, աս մեր Մար-

մի առաջիկայ սէրայի նախընթաց նիստը: Խնդիրը հետ միասին պէտք է 20 բուրլ մոցնել լրացուցիչ քննութիւն տալու համար, իսկ 10 բուրլ առաջին կամ երկրորդ տէրմիսի քննութեան համար: Բացի դրանից, խնդիրը հետ միասին պէտք է ներկայացնել. 1) հաստատութեան վկայականը. 2) համալսարանի արձակման վկայականը, որով հաստատվում է, թէ ուսանողը անցրեց համալսարանական պարապմունքների մէջ քննութիւնների պայմանների պահանջած կէս տարինը, և 3) կենսագրական տեսութիւն, ուր պէտք է նշանակված լինի քննվողի անունը, ծննդեան տեղը, տալիքը, ծագումը և դաւանութիւնը, և նոյնպէս ուսումնարանական կրթութեան և համալսարանական պարապմունքների ընթացքի վերաբերեալ թեմալ անհրաժեշտ տեղեկութիւններ: Այդ նկարագրութեան հետ միասին կարող են ներկայացված լինել պարապմունքի և աշխատասիրութեան ապացոյցները համալսարանական ընթացքի ժամանակ, այսինքն տուած պարգևները, հեղինակութիւնների հաւանութիւնը, ֆակուլտետների կամ առանձին դասախօսների վկայութիւնները գործնական պարապմունքների մէջ մասնակցելու մասին, ֆակուլտետների և պրօֆէսօրների առանձին յանձնարարականները և այլն: Օտար համալսարանների դոկտօրի դիպլօմը հաւասար նշանակութիւն կունենայ հետ համալսարանի վերջնական ատեստատի հետ: Նախընթաց նիստում այդ դոկտմնտները քննելու ժամանակ, յանձնաժողովը իրաւունք կը տայ քննվողն այնպիսի կանդիդատներին, որոնք բաւականաչափում են սահմանված պահանջներին: Եթէ կանդիդատի համալսարանական թերթը քննելու ժամանակ կերեայ լսած դասընթացքի նշանաւոր պակասութիւն, այն ժամանակ յանձնաժողովը կարող է չը թոյլ տալ քննութիւն տալու առաջիկայ սէսիային, խորհուրդ տալով կանդիդատին լրացնել այդ պակասը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«РУССКИЙ КУРЬЕР» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Գերմանիայի քաղաքական և պարլամենտական կեանքի մէջ օրերումս այնպիսի փոփոխութիւն կատարվեցաւ, որ ևս ինձ իրաւունք չը տուի լուրթեամբ անցնել նրա մասին և տեղեկութիւն չը հաղորդել միացեալ Գերմանիայի պարլամենտական

դասերական ընկերութեան տպարանի բեկորներից են կազմակերպված: Ո՛ւր է մեր տպարանը:—Գընանք առաջնորդներ այս զօրախոս ուրուականներին մեր տպարանը... ընկերապատկան չինութեան նկուղների մի անկիւնում նա կը տեսնէ իր հարազատ մօրի ծնունդը լքեալ և աւերակ: Կարծես թէ մի վշտացած սիրտ անիծել է այն բոլոր գեղեցիկ սկզբունքները, որ ձեռնարկել են մեր նախնիքը ազգային լուսաւորութիւնը դիւրացնելու համար: «Եւ կեցիք տուն քո քեզ աւերակ»: Ո՛հ ինչ տարաբաղէ և յուսահատ վիճակ...

Վերջացնելով մեր նկատողութիւնը, որ գուցէ համառօտութեան պատճառով շատ կէտեր չը լուսաւորվեցան կատարեալապէս և շատերն ևս սըւպրեցան մեր ուշադրութիւնից, Մարդասիրական ընկերութեան խորհրդական պատուելի անդամներից խոնարհաբար պատիւ ունեմ խնդրելու, որ ներկայ նկատմունքներ քննութեան ենթարկվի մի հրապարակական նստի մէջ, ինչպէս տրամադրում է ընկերութեան կանոնադրութեան յօդուածը:

Որովհետև ներկայ նկատմունքներն լուրջ քննութիւնը առաւել կերաշխարհիկ եթէ մեր դատը մամուլին յանձնվի, այդ պատճառով խնդրած եմ պատուելի «Մշակի խմբագրութիւնից, որ իմ յօդուածիս նուիրել իր թերթի մի քանի էջերը և առանձին տպագրելու համար իմ ծախսով, մի և նոյն ժամանակ նուիրելով ներկայ խնդրին իր խմբագրական կարծիքը, որ մեղ համար առաւել թանց պիտի լինի: Ընկերութեանս վերածնունդութեան ժամը հասած կը համարեմ, երբ «Մշակը» իր առաջնորդականներով մեր ընկերութեան հարցը բարձրացնէ: Ոչինչ, եթէ երբեմն նրա խօսքը և ոճը ծանր թվի մեր ականջին: Լաւ իմանանք, որ այդ խստութիւնը վերաբոյժի դանակի նման է, որ առանց ցաւ պատճառելու չէ կարող բժշկել:

Բժ. Մ. Արամեանց

կեանքով հետաքրքրվող ընթերցողներին, գրում է «Русский Курьер» լրագրի թղթակիցը: Բանը նրանումն է, որ այն ժամանակից, երբ պետական կանցլերը արմատականապես փոխեց իր քաղաքականութիւնը և ազատամիտ լինելուց պահպանողական դարձաւ, նրա ամենահաւատարիմ կուսակցը կենտրոնական կուսակցութիւնն էր համարվում, որ եռանդով պաշտպանում էր նրա քաղաքականութիւնը: Ինչ որ էլ լինէն այդ կուսակցութեան տեսլականները, անհրաժեշտ է խոստովանել, որ կենտրոնը ամենալաւ կազմակերպութիւն ունեցող կուսակցութիւնն էր. ոչ մի տեսակ օրինազրծներ, ոչ մի տեսակ հարցեր չէին շփոթում կենտրոնական կուսակցութեանը և նրա անդամները, ձգտելով իրանց նպատակներին, գործում էին համաձայնութեամբ և պաշտպանում էին պետական կանցլերի քաղաքականութիւնը: Միայն վերջին ժամանակներում կղերականները կորցրին իրանց հաւատարմութիւնը դէպի իշխան Բիսմարկ և քուէարկութիւնների ժամանակ յաճախ սկսեցին ձայն տալ ազատամիտների հետ: Այդպիսի դէպքեր առաջ շատ հազուադիսա երևոյթ էին կազմում: Իսկ այժմ նոյն իսկ կենտրոնի մէջ մինչև այժմ չեղած բան կատարվեցաւ. մի և նոյն կուսակցութեան զանազան բաժինների մէջ՝ վերջինների և բուն կենտրոնականների մէջ առաջ անհամաձայնութիւն սկսվեցաւ և յետոյ բացարձակ մաքառումն: Այդպիսի երևոյթի պատճառը մեկնելու համար անհրաժեշտ է բացատրել, որ բողոքական վերջիններ միացան կենտրոնի հետ իբրև հակակառավարչական և ընդդիմադրական մի կուսակցութեան հետ: Վերջիններ, անբաւական լինելով այն ձևից, որով 1866 թուականին կատարվեցաւ Գերմանիայի միութիւնը, և թեով մեծ չք լինելով վճռեցին միանալ այն կուսակցութեան հետ, որ նրանց հետ միասին ուստի ընդդիմադրական կուսակցութիւն կը կազմէր այն ժամանակվայ ազատամիտ կառավարութեան դէմ: Փանի որ կենտրոնականները իշխան Բիսմարկի իրաքանչիւր ձեռնարկութեան և առաջարկութեան մասին բացասական կերպով գլուխները թափ էին տալիս, վերջիններ կենտրոնականներից աւելի լաւ կուսակցների չէին փնտռում: Բայց այն ժամանակից, երբ 1879 թուականին հարկերի հովանավորող ձևի օրինադրի քուէարկութեան ժամանակ, կենտրոնականները առաջին անգամ պաշտպանեցին պետական կանցլերին, վերջինների մէջ անբաւականութիւն նկատվեցաւ և վերջինների այն ժամանակվայ առաջնորդ, Նիպեր համոզում էր իր համախոհներին բաժանվել կենտրոնականներից: Միայն կենտրոնական կուսակցութեան առաջնորդ Վինդհորստի անձնական ազդեցութեան շնորհիւ վերջինների անջատվելը այն ժամանակ չք կայացաւ և միայն այժմ վերջիններ ամբողջ խումբերով անցնում են ազատամիտների բանակը, որովհետև ներկայումս ազատամիտներն են ընդդիմադրում երկաթէ կանցլերի քաղաքականութեանը: Ինչ որ էլ լինի, իրողութիւնը այն է, որ կենտրոնականների և բողոքական վերջինների մէջ կատարեալ և բացարձակ անջատումն կատարվեցաւ: Այդպիսի փոփոխութիւնը անմիջական ազդեցութիւն կունենայ պրուսական լանդտագի անդամների ընտրութիւնների վրա, որ խոստանում է ազատամիտ լինել: Եթէ պրուսական նոր լանդտագի մեծամասնութիւնն էլ ընդդիմադրական կը լինի, այն ժամանակ Բիսմարկին կարելի է կատարելապէս յաղթված համարել, որովհետև մինչև

այժմ միացեալ թագաւորութիւններից և դքսութիւններից Պրուսիան միակ էր, որ պետական կանցլերին իր բարեբար էր համարում: Այս դէպքում երկաթէ կանցլերը ստիպված կը լինի բացականչել միայն «դու ել իմ դէմ, Բրուսոս»:

Չը նայելով այս բոլոր անսպասելի անցքերին, որոնք վատ ազդեցութիւն պէտք է գործէին կանցլերի վրա, իշխան Բիսմարկ, ինչպէս երևում է, մտադիր է գնալ իր ձախապարհով առանց շեղվելու: Տեսնելով, որ դատարկ խոստումները այլ ևս չեն ներգործում կղերականների վրա, նա ինչպէս երեւում է, մտադիր է իր տկարութիւնների և խոստումների մի մասը իրագործել: Այդ նպատակով Բերլին է հրաւիրված գերմանական հաւատարմատարը պապի մօտ Փոն-Շէօցեր: Ասում են, որ Շէօցեր անձամբ պէտք է յայտնի իշխան Բիսմարկին այն կետերը, որոնց հիման վրա Հռոմի և իշխան Բիսմարկի մէջ կարող է կատարեալ համաձայնութիւն կայանալ: Գիւլյոմարիական շրջանները հաւատացնում են, որ, եթէ իշխան Բիսմարկի և պապի մէջ համաձայնութիւն կը կայանայ, վերջինը կաղէկ կղերականների վրա, որոնք նորից պետական կանցլերի հաւատարմութեանը կը դառնան: Իսկ ինձ թւում է, որ Բիսմարկի բարեկամանալը վատիկանի հետ նրա դէմ ոտքի կը կանգնացնէ բողոքական բոլոր հոգեւորականներին, որոնք դեռ անցեալ տարի բացարձակ յայտնում էին իրանց անբաւականութիւնը այն բանի առիթով, որ Բերլին եկած պապական նուիրակին թագաւորապէս յարգանքներով ընդունեցին, թնդանօթներ արձակեցին, պատուաւոր պահպաններ նշանակեցին և այլն:

Այստեղ ամենքի խօսակցութեան առարկայ է դարձել կենտրոնական կուսակցութեան առաջնորդ Վինդհորստի տեսութիւնը վերջինների առաջնորդի հետ, որ տեղի ունեցաւ Ստրասբուրգի մէջ: Չափազանց հետաքրքիր է այն հանգամանքը, որ այդ երկու առաջնորդների բանակցութեան ժամանակ Ստրասբուրգում նոյն հիւրանոցի մէջ գտնվում էր մի կոմսուհի, որը, ինչպէս երևում է, միջնորդ էր երկու կուսակցութիւնների մէջ: Այդ տեսութիւնը այնքան գաղափար էր, որ մինչև այժմ յայտնի չեն բանակցութեան ոչ առարկան և ոչ նպատակը: Հաւատացնում են, որ այդ տեսութեան հետևանքն է կենտրոնականների և Հանսօվերի պարտիկուլյարիստների բաժանումը:

Վերջին կայսրը ներկայումս Գալտէյնի մէջն է: Այստեղի լրագրիները հաղորդում են, որ կայսրը աղափաղ է ուկրացական, ամեն օր զբոսնում է և խօսակցում է Գալտէյնի մէջ եղած հիւրերի հետ: Երբ կայսրը աւելի հեռու է գնում զբոսնելու, նրան ուղեկցում է միայն օրապահ Փիլիպ-ադիւտանտը:

ՖԲԱՆՍԻԱ

«Post» լրագրին փարիզից հեռագրում են յուլիսի 25-ից:

Մամուլի նշանաւոր մասը, մինչև անգամ կառավարութեան պաշտպան լրագրիները ընդդէմ են, որ պատգամաւորների ժողովը վաւերացնէ կառավարութեան պահանջած կրեդիտը Սուէզի ջրանցքը պաշտպանելու համար: Մամուլի այդ մասը պնդում է, որ եւրոպայի այժմեան դրութիւնը ի նկատի առնելով, Ֆրանսիան ոչ մի դէպքում պէտք է չը մասնակցէ եղբայրական արշաւանքին, որովհետև Սուէզի ջրանցքի պաշտպանութիւնը կը ստիպէ ֆրանսիային մասնակցել Անգլիայի պատերազմական գործողութիւններին: Միւս կողմից Սուէզի ջրանցքի պահպան լինելը և աւելի հեռու գնալու իրաւունքի չունենալը Ֆրանսիական գործերի համար լինելու է խաղաղութեան ջրանցքի վրա իրաւունքի չունենալը: Նայելով այս բոլոր անսպասելի անցքերին, որոնք վատ ազդեցութիւն պէտք է գործէին կանցլերի վրա, իշխան Բիսմարկ, ինչպէս երևում է, մտադիր է գնալ իր ձախապարհով առանց շեղվելու: Տեսնելով, որ դատարկ խոստումները այլ ևս չեն ներգործում կղերականների վրա, նա ինչպէս երեւում է, մտադիր է իր տկարութիւնների և խոստումների մի մասը իրագործել: Այդ նպատակով Բերլին է հրաւիրված գերմանական հաւատարմատարը պապի մօտ Փոն-Շէօցեր: Ասում են, որ Շէօցեր անձամբ պէտք է յայտնի իշխան Բիսմարկին այն կետերը, որոնց հիման վրա Հռոմի և իշխան Բիսմարկի մէջ կարող է կատարեալ համաձայնութիւն կայանալ: Գիւլյոմարիական շրջանները հաւատացնում են, որ, եթէ իշխան Բիսմարկի և պապի մէջ համաձայնութիւն կը կայանայ, վերջինը կաղէկ կղերականների վրա, որոնք նորից պետական կանցլերի հաւատարմութեանը կը դառնան: Իսկ ինձ թւում է, որ Բիսմարկի բարեկամանալը վատիկանի հետ նրա դէմ ոտքի կը կանգնացնէ բողոքական բոլոր հոգեւորականներին, որոնք դեռ անցեալ տարի բացարձակ յայտնում էին իրանց անբաւականութիւնը այն բանի առիթով, որ Բերլին եկած պապական նուիրակին թագաւորապէս յարգանքներով ընդունեցին, թնդանօթներ արձակեցին, պատուաւոր պահպաններ նշանակեցին և այլն:

ցել Անգլիայի պատերազմական գործողութիւններին: Միւս կողմից Սուէզի ջրանցքի պահպան լինելը և աւելի հեռու գնալու իրաւունքի չունենալը Ֆրանսիական գործերի համար լինելու է խաղաղութեան ջրանցքի վրա իրաւունքի չունենալը: Նայելով այս բոլոր անսպասելի անցքերին, որոնք վատ ազդեցութիւն պէտք է գործէին կանցլերի վրա, իշխան Բիսմարկ, ինչպէս երևում է, մտադիր է գնալ իր ձախապարհով առանց շեղվելու: Տեսնելով, որ դատարկ խոստումները այլ ևս չեն ներգործում կղերականների վրա, նա ինչպէս երեւում է, մտադիր է իր տկարութիւնների և խոստումների մի մասը իրագործել: Այդ նպատակով Բերլին է հրաւիրված գերմանական հաւատարմատարը պապի մօտ Փոն-Շէօցեր: Ասում են, որ Շէօցեր անձամբ պէտք է յայտնի իշխան Բիսմարկին այն կետերը, որոնց հիման վրա Հռոմի և իշխան Բիսմարկի մէջ կարող է կատարեալ համաձայնութիւն կայանալ: Գիւլյոմարիական շրջանները հաւատացնում են, որ, եթէ իշխան Բիսմարկի և պապի մէջ համաձայնութիւն կը կայանայ, վերջինը կաղէկ կղերականների վրա, որոնք նորից պետական կանցլերի հաւատարմութեանը կը դառնան: Իսկ ինձ թւում է, որ Բիսմարկի բարեկամանալը վատիկանի հետ նրա դէմ ոտքի կը կանգնացնէ բողոքական բոլոր հոգեւորականներին, որոնք դեռ անցեալ տարի բացարձակ յայտնում էին իրանց անբաւականութիւնը այն բանի առիթով, որ Բերլին եկած պապական նուիրակին թագաւորապէս յարգանքներով ընդունեցին, թնդանօթներ արձակեցին, պատուաւոր պահպաններ նշանակեցին և այլն:

Բայց և թիւրքաց գործի մէջ, Կ. Պոլսում, յայտնի չէ թէ ում միջնորդութեամբ լուր է տարածված որ թիւրք զինուորներին միայն այն նպատակով կուղարկեն Նիզպոս որ աքսորեն այնտեղից եւրոպացիներին: Միւս կողմից մօլմաններն էլ արդէն շարժման մէջ են: Բէրլային մօտակայ մզկիթներէից մինի մէջ մօլմաններ արդէն երկու անգամ ժողով են կազմել և վճռել են Նիզպոսում իրանց միասնաբար կրօնակիցներին հաւակցութիւն յայտնել: Նրանց բացարձակ քարոզում են համակրութիւն դէպի եգիպտացիները:

Կ. Պոլսում ընկելով եւրոպացիները երկիւղով են վերաբերվում դէպի այդ շարժումները և աշխատում են հետամուտ լինել այն խմբերին, որոնք հաւաքվում են արձանդներում և եգիպտական անցքերի մասին վիճաբանելու նպատակով և որոնք երբեմն իրանց թոյլ են տալիս արդէն անցում դարձնող եւրոպացիներին բարձրաձայն և անվայել կերպով ծաղրել:

Եթէ այդ բոլոր վտանգաւոր շարժումները Գերմանիայի դրդմամբ են կատարվել և նրա դէպի թիւրքիս ունեցած բարեկամութիւնից են սկիզբ առել, այն ժամանակ փառք և պատիւ լուսաւորված Գերմանիային:

ՆԱՄԱԿ ԱՄՍՏՐԻԱՅԻՑ

Վիեննա, 21 յուլիսի

«Տայր» լրագրը Նիզպոսում ի ներկայութիւն Անգլիային արած շարժման միւս տերութեանց նկատի առած դիրքը մանրաբանելով բացատրում է հետեւի կերպով: Եթէ տակաւին բախտ ունենք տեսնելու որ Բ. Պոլսը կը մասնակցի Նիզպոսում ապօրինի անդամութեան վիճակը լուրջ և ողջամիտ մի կառավարութեան եղանակի վերածելու, կամ եթէ մեծ պետութիւններ կը ցանկան, վերջին լուրջում, ապա իրանց վիճակը այն ձեռնարկութեան, որուն մէջ մտել ենք մենք, այնքան լաւ կը լինի որ չենք կարող չը ծափաբարկել, բայց յուսալու նշույլ չը կայ որ մեզ ազատեն այն պատախաճանքներինց գոր

մենք միայնակ յանձն առինք: Անգլիական ժողովուրդը չէ կարող համբերել, որպէս զի սկսած գործը զուտ բերէ, հաշիւը մաքրէ, վերջը իրան ասեն թէ հեռանայ, և սուլթանին թող տուր Վերսալին իր նախկին դրութիւնը ձեռք առնելու: Այլ իբր ինքնակալ, ոչ իբր միապետական վեհապետ, ոչ որ և ինչ տիրոջն ու որ և է կարծեցեալ իրաւունքով սուլթանը ազդեցութեան և միջամտութեան համար Նիզպոսում այսուհետեւ անել չունի, որովհետև իր ինքնակալութեան պատասխանատուութիւնները անսօթաբար մոռացաւ և զանց առաւ նոյն իսկ վտանգի ժամանակ: Նիզպոսում անիշխանութեան վտանգից ազատելու փոյթին ձեռնամուրէ լինելով յայտնի բան է Անգլիան, միայնակ և առանձին պատասխանատուութեամբ գործելուն համար, ապագայում իր ազատած երկրի վրա պիտի ստանայ և պիտի պահանջէ կօնտրօլի մի իրաւունք: Նոքա, որոնց այս հեռատեսիլ հանգամանքը, զփկանակութիւն կամ կասկած կը պատճառէ, այնպիսիք թէ լինեն զիւսնադէտք կամ օսմանան փաշաներ, տակաւին ժամանակ և դիւրութիւն ունեն մեր ձեռնարկած գործին վտանգից դժուարութեանցը գործակցելու և նոյն իսկ այս մասնակցութեանց իրաւունքով ներկայ դէպքերի վրայ մի ազդեցութիւն ունենալու:

Եթէ ներկայացած սոյն առիթին օգուտ չը քաղեն և ձեռքէ փախցնեն, այն ժամանակ իրանց բռնած ընթացքին հետեւանալը պէտք է հպատակվեն և ճանչնան Անգլիայի պահանջները, ինչ որ էլ լինի Նիզպոսում կայանալից կառավարութեան ձեռք, մենք այն տեղ կարգ և կանօն վերահաստատելու համար մի պատերազմի պիտի ձեռք դարձնենք:

Գիւսնադէտք ճշգրիտ յանձնառութիւններ առած էին այնպիսի մի ժամանակում, որ իրաց վիճակը բոլորովին տարբեր էր. պարզ բան է որ այժմ այդ յանձնառութիւնները ոչնչացած են: Նիզպոսում Միւս Բրիտանիայ պաշտպանութեան ներքին կանօնաւոր մի կառավարութեան հաստատութիւնը ամենայնպէս և ամենատեղեկան կերպով կը դիւրացնէ արդի դժուարութիւնները: Այս լուծումը կը հայթայթէ յաջողութիւն և պարտքերի հատուցման կարողութիւն այնպիսի մի երկրի, որ այսօր անիշխանութեան ենթարկված է, վերջապէս Նիզպոսում վաճառականական և երեստական շահեր ունեցողների իրաւունքները կապահովացնէ, կը հեռացնէ մեր Հնդկաստանի ճանապարհից ամեն վտանգ և երկիւղ: Միով բանիւ սա կը լինի քաղաքական մի փորձ կատարելապէս արժանի այն հուշակին, զոր մենք վայելում ենք իբրև մի կայսրութիւն կառավարողներ. այս փորձը մեր գլուխ բերած ուրիշ բաղադրիւն ձեռնարկութիւններից աւելի շատ արդիւնքներ կարող է տալ:

Մեր ծովային առաւելագոյն գործիւնը, մեր լաւ կազմված բանակը, իր հետ ունենալով բարձր յատկութեանց տէր մի ազգի մեծ հարստութիւնը և ջերմ հոգանքը, սոցա ամենքը Նիզպոսում հզոր մի կառավարութեան վերահաստատութիւնը կերպարանաւորեն, միայն թէ արդի նախարարութիւնը իր առաջը բացված ճանապարհին մէջ մտնելու չը վարանի, որուն մէջ վաղ կամ ուշ պէտք է որ մտնէ, եթէ այդ նախարարութիւնը մնայ Անգլիոյ քաղաքական գործերի գլուխը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— «Ատենիանի ընկերութիւնը» յուլիսի 15-ից Հռօմից հաղորդում է հետեւեալը: Այսօր Պաթախտական կառավարութեանը առաջարկեց այնպիսի միջոցներ ձեռք առնելու, որ ունեն Անգլիան և Ֆրանսիան Սուէզի ջրանցքը պաշտպանելու համար: Այդ առաջարկութեան վերաբերութեամբ, Մանչէրի երախտագիտութիւն յայտնելով Անգլիայի բարեկամական յարաբերութիւնների համար և հաւատացնելով, որ խաւիան նոյն բարեկամութեամբ է պատասխանում նրան, մի և նոյն ժամանակ սանց, որ խաւիական կառավարութիւնը այդ հարցի վերաբերութեամբ չէ կարող իր միտքը յայտնել, առաջ քան թէ ինքն կիմանայ կօնֆերենցիայում գտնվող ուրիշ լիազօրների հայացքները:

— «Միջազգային հեռագրական ընկերութեանը» Կ. Պոլսից հեռագրում են յուլիսի 14-ին: Կօնֆերենցիայի այսօրվայ նիստից առաջ բանակցութիւններ էին կատարվում արտաքին գործերի մի նիստի և լորդ Գիլֆերթին մէջ: Ասում են, որ

Типогр. Главн. Упр. Главнотач. гражд. час., Лор.-Мелик. ул., д. 833.